ԴԵՅԻՄ ԼԱԲԵՐԻՈՍ

Եվ խայտաճամուկ միմոսի շորով՝ Կեսարի կանչին
Լաբերիոսն ահա կանգնեց կըրկեսում, Հռոմի առաջին։
Թընդաց Հըռոմը, և աթոռներից վեր կացան հանկարծ
Ազնըվականներն ու ժողովուրդը ահից սարսափած.
Ու դըղըրդացին արձակ կըրկեսում շըփոթ ու շըշունջ,
Հազիվ լըսելի խառնակ աղաղակ ու դըժգոհ տըրտունջ.
«Լաբերիոսն այստեղ... և ինչպես միմոս... Այստեղ օրենքով
Գերիներն իրենց կուռ շըղթաների շըռընչյուններով,
Սըրի շաչյունով անմահ Հըռոմի հըրճվանքի համար
Ճըգնում են ըմբշի և կամ միմոսի պըսակ ստանալ...
Լաբերիոսն այստեղ... բայց չի մոռացել Հըռոմը նըրան.
Հին քաղաքացի, ծեր, հըռչակավոր պոետ աննըման,
Եվ արդ, կըրկեսում, ամբոխի առջև այսպես նա կանգնած,
Լուռ ու գըլխակոր գետնին է նայում ամոթից շիկնած...»
Եվ տըրտունջների ձայներն անորոշ նըրան են հասնում.
Բայց իր աչքերը Հըռոմի վըրա նա չի կամենում
Բարձրացրնել այժմ՝ նըրա բացահայտ վըճռի ժամանակ.
Եվ անարգանքին ինքնաբավական հայացքով մենակ
Կեսարն է նայում։ Նըշան տըվավ նա հրամայող ձեռքով։
Լըռեց վերըստին հըպարտ Հըռոմը։ Գետնակոր գըլխով,
Ինչպես աղոթող ծանըր փորձանքի ահավոր ժամին,

Կանգնած է հուզված հանդիսի առջև երգիչ ծերունին։
Բայց դեմքը ահա առաջվա նըման փայլեցավ վառ-վառ,
Մըռայլ ճակատը դարձավ վերըստին հանգիստ ու
պայծառ,
25 Խոհուն աչքերը դըժգոհ ժողովին նայեցին կըրկին,
Ու նորից երգի, բանաստեղծության համարձակ հոգին
Հասավ պոետին, սիրտ տըվավ նըրան։ Նա զըվարթացավ
Պաղ-պաղ սարսուռը սըրտիցը մինչև մատները անցավ...
Այլակերպված է նա բոլորովին։ Մի ակընթարթում
30 Նա ոգևորվեց։ Վառված աչքերը կըրակ են ցայտում։
Ընկճող հայացքով իր շուրջն է նայում։ Տարածեց ահա
Անզուսպ խըռովքից դողացող աջը քընարի վըրա...
Ժողովը լուռ է։ Բոլոր աչքերը խոնարհած են ցած։
Ազնըվականները մըթին գիշերից մըռայլ են նստած,
35 Եվ ասպետները նըստած են խըրոխտ դեմքով կընճռալի.
Ուրախությունից փայլում է դեմքը ահեղ տիրողի։
Նոր նըշան տըվավ։ Եվ ահա երկչոտ ու անհամարձակ
Բարձրացավ ձայնը... ծերի դողդոջուն, չոր մատների
տակ
Գովված քընարի ոսկի լարերը հընչեցին հանկարծ.
40 Խորին լռության ժամին առաջին երգը որոտաց։
Եվ սթափվեցավ Հըռոմը նորից. մարդիկ շարժվեցին.
Եվ աշխատում են պարզորոշ լըսել զայրացած երգչին։
Իսկ ալևորը, անխիղճ անպատված հին քաղաքացին,
Տակավին հըպարտ, արհամարհանքով նայում է Հռոմին։
45 Նա երգում է անբավ փառքը, մեծությունը Կեսարի,
Բարձըր խելքն ու տերությունը, իշխանությունը բարի։
Երգում է փայլը նրա հաղթության և մաղթում է կյանք
Եվ ուղարկում է հըզոր Կեսարին հարգ ու մեծարանք։

Փառաբանում է նա ճոխությունը ու փառքը Հռոմի,
50 Եվ աղաչում է, որ բաժին անեն... խինդը միմոսի...
Թախանձում է նա, որ ողջ մըտածեն, ինչպես որ ինքը,
Կեսարի շըրթան վըրա ճանաչեն իրենց օրենքը,
Որ հին օրերի ազատ երգերը ընդմիշտ լըռեին,
Ու միշտ Կեսարի թըշնամու ջանքերն իզուր ցըրվեին.
55 Հայրերի գոռոզ Հըռոմը գըլուխ խոնարհի նըրան,
Հըռոմում մարդիկ մըտածեն այնպե՛ս... միմոսի նըման...
Հանկարծ վիրավոր պոետը ցընցեց գըլուխն ալեզարդ,
Հընչող լարերին կատաղի ձեռքով զարկեց հուսահատ,
Քընարը ձըգեց ու գոռաց ցասկոտ ձայնով ահարկու.
60 — Բարձրացի՛ր, Հըռո՛մ, իրավունքներդ կորցնում ես դու։